

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը (այսուհետ՝  
Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում փորձագետ ներգրավելու մասին

Տարածքային ենթակառուցվածքների զարգացման վարչության փորձագետ

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. Հանրապետության բնակավայրերում աղբահանության սխեմանի մշակում.

2. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացման փուլում գտնվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրում» ընդգրկված խորհրդատվական միջազգային փորձագետների աշխատանքի համակարգում.

3. Հանրապետությունում կոշտ թափոնների վերամշակման մեխանիզմների ներդրման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների փաթեթի մշակում.

4. Հանրապետությունում առկա աղբանոցների գույքագրում.

5. Հանրապետությունում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝** մեկ տարի:

**Փորձագետի պարտականությունները՝**

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

**Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

1. բարձրագույն կրթություն.

2. անգլերեն լեզվի ազատ տիրապետում.

3. հանրային ծառայության առնվազն 4 տարվա աշխատանքային ստաժ և աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ.

իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

4. հաշվետվությունների կազմման, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ.

5. անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

6. համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն:

**Ղիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.02.2019թ.**

**Աշխատանքի վայրը՝** ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

**Ղիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- ղիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (ղիմումի ձևը կցվում է),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարության ձևը կցվում է),
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ ղիպլումի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացի փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: հեռ. 010-511-355

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման  
և զարգացման նախարարության գլխավոր քարտուղար  
պարոն Մ. Բաղդասարյանին

-----ից  
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

-----  
դիմողի հասցեն

-----  
դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

### ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից  
հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ աշխատանքային պայմանագրով  
ընդունել ինձ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության

-----  
ստորաբաժանման անվանումը

որպես փորձագետ աշխատելու համար:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու  
ունակություն

-----  
(ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

-----  
(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով

(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ \_\_\_\_\_

(գրադվում եմ, չեմ գրադվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

(գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախագրուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ \_\_\_\_\_  
ստորագրություն անուն, ազգանուն

«-----»----- 2019 թ.

Հայտարարության ձև

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

.....-ի  
(անունը, ազգանունը և հայրանունը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով՝

հայտնում եմ հետևյալը.

**Պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունը դադարեցվել է՝**

1) կարգապահական տույժ կիրառելու պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

2) օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

3) օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

4) <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

5) ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

6) ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

7) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով \_\_\_\_\_  
(այո, ոչ)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

\_\_\_\_\_  
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրությունը

«-----»----- 2019 թ.